

ՂԵՒՈՆԴ ՎՐԴ. ՊԵՔԱՐԵԱՆ, ՌՈՏՈՍՏՈՑԻ.—Մբ. Զո. 1905  
ին, հիւրընկալ և քարտուղար (1911—12), կարգաթող 1913 ին:

ՂԵՒՈՆԴ ՎՐԴ. ՓԻՐՂԱԼԷՄԵԱՆ, ՏՈՍՊԵՑԻ.—Ծ. 1830 ին  
Վան: Հայրը՝ Աւեսիս (≈ 1850). Մայրը՝ Իւդարեւ (≈ 1842). (Նո-  
սարֆ, էջ 90), աչկ. Խրիմեան Հայրիկի Վարագայ վանքին մէջ,  
Զո. Լիմ 1852 ին. վարած է Ղալաթիոյ (1870) եւ Սամաթիոյ  
Ս. Յակոբ եկեղեցիներուն քարոզչութիւնը, Լոնտոնի եւ Ման-  
չէսթրի հովուութիւնը (1875—77). քսան տարի ճամբորդած է  
Հայաստան՝ և հաւաքած է արձանագրական անհատնում նիւ-  
թեր և ձեռագրական յիշատակարաններ՝ որոնց մէկ մասը հըրա-  
տարակած է իր Նոսարֆ Հայոց կոչուած աշխատութեան մէջ. իսկ  
մեծագոյն մասը, 1898 թուին, երեք մեծ կապոցներու մէջ կըն-  
քուած, Յովհաննէս Աւագ. քհն. Մկրեանի յանձնարարականով  
Պոլսէն Գիւտ Ա. քհն. Աղանեան կը տանի Խրիմեան Հայրիկ  
կթղ.ի, յանձնուելու համար էջմիածնի Մատենադարանին:  
Փիրղալէմեան մասնաւորապէս երկու անգամ այցելած է Ս.  
էջմիածին, առաջին անգամ Վանէն 1860 ին Խրիմեան Հայրի-  
կի, երեմիա եւ Իգնատիոս եպոստոսներու եւ ուրիշներու հետ.  
Երկրորդ անգամ՝ Կ. Պոլսէն էջմիածին եւ անկէ կը դառնայ  
Կ. Պոլիս 1864 ին. այս վերջին ճամբորդութեան ոտանաւոր նը-  
կարագրութիւնը հրատարակած է ձանապարհորդարիւն ի Մայր  
Արոտ Արարատեան եւ անի ի Կ. Պոլիս խորագրով: (տպ. Պոլիս,  
1871) Ղեւոնդ վրդ. իր այս գործին յառաջաբանին մէջ կը  
գրէ թէ ողելորոտեանց վերաբերեալ ուրիշ վեց հատորիկներ ևս  
պատրաստ ունի, որոնց մին ալ, դարձեալ ոտանաւոր գրուած՝  
կը հրատարակէ 1882ին Թիֆլիզի մէջ, Չորս ընկերֆ, որ է ձանապար-  
հորդարիւն Վանայ միւսչա Կոստանդնուպոլիս անուէնով: Մանր պատ-  
մագիրներու բովանդակութենէն եւ յիշատակարաններու ընդօ-  
րիակութենէն զատ շինած է Ժանանակագրարիւն մը (950—1657)  
յիշատակարաններէ քաղելով. (ղիւան, զիբք ժ. էջ 494—504,  
նաև Չորս ընկերֆ. էջ 173—176): Ուխտաւորութեամբ կ'այցելէ Ս.  
Յակոբի վանքը և 1891ին կը վախճանի հոն և կը թաղուի Սիոնի  
գերեզմանատունը: Ս. Յակոբի վանքին յիշատակ թողած է Ռու-  
մելիի երկաթուղոյ երկու արժէթուղթեր: (Արձկր. Տն. Ժող-  
նիս. ձիւր. 1891. էջ 84): Իր դամբարանին երկու կողմերը կը  
գտնուի հետեւեալ տապանագիրը զոր յօրինած է Խրիմեան Հայրիկ: